ՀԱՐԹԱՇԵՆ

Գյուղի տարածքում առկա են պատմամշակութային երեք հուշարձան. երկու XVII-XVIII դդ. գերեզմանոց, որոնցում թաղումներ են կատարվել նաև հետագայում և XIX դ. եկեղեցի գյուղի մեջ: XIX դ. տապանաքարերից մի քանիսն արձանագիր են, որոնցից մեկը ներառեցինք պրակում:

188*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. օրորոցաձև, հյուսիսային և հարավային նիստերին, 4-ական տող.



ԽԱՆՈՒՄ ԱՂԱԽԻՆՆ ԵՄ ԵՍ ԴԱՐԱԲԱՂԴ
ԼՌԻԿ ԵՒ ԱՆՁԱՅՆ ԿԱՄ ՄՆԱՄ ԵՍ ԱՍԴ
ԸՆԴ ՔՍԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԱՑ ԴԵՌ ԹԵՐԻ
ՄԱՀ ՁԻՍ ՅԱՅՍ ՏԱՊԱՆ ԲԱՆԴԱՐԳԵԱՑ ԳԵՐԻ:

ՉԷՐ ՀԱՍԵԱԼ ՀՈՒԼՆՅՁ Ի ԿԵՆԱՑՍ ՅԱՅՍ ՏՂՄՈՒՏ ԿԵՆՑԱՂ
ՓՈՒԹՈՎ ԺԱՄԱՆԵԱՑ ԻՆՁ ՄԱՀՈՒՆ ՍԱՆԳՍՆՂ (ՄԱՆԳԱՂՍՆ՞)
ԵՀԱՏ ԱՆԽՆԱՅ ՁԻՄ ՏԸՀԱՍ ԾԱՂԻԿ
ԳՈՒՆԱԹԱՓ ԱՐԱՐ ՁԻՄ ՎԱՐԴ ԳԵՂԵՑԻԿ: